ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 26-Ն

26 մայիսի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածով և հաշվի առնելով Գյումրու «Ճանապարհային ոստիկանության» ծառայության 14 մայիսի 2011 թվականի N 17/27-2101 գրությամբ տրամադրված տեղեկատվությունը Մարալիկ քաղաքի վաճառված տրանսպորտային միջոցների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2011 թվականի բյուջեի վարչական մասի եկամտային մասից (գույքահարկ փոխադրամիջոցներից) պակասեցնել ընդամենը 747000 (յոթ հարյուր քառասունյոթ հազար) դրամ:
2. Համապատասխանաբար 01.1.1.51 դասակարգման (ապարատի պահպանման ծախսեր) 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածից պակասեցնել 747000 (յոթ հարյուր քառասունյոթ հազար) դրամ:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

26 մայիսի 2011 թվական

ք. Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 27-Ն

26 մայիսի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարալիկի քաղաքապետարանի և Հայաստանի Հանրապետության նախարարության միջև անասնաբուժական բնագավառում համայնքի ղեկավարին լիազորությունների պատվիրակման պայմանագրի բացակայությունը

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2011 թվականի բյուջեի վարչական մասի եկամտային մասի 7421 հոդվածից (պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի համար պետական բյուջեից ստացվող միջոցներ) պակասեցնել 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ:

Համապատասխանաբար ծախսային մասի 08.2.1.51 դասակարգման (գյուղատնտեսություն) 4241 (մասնագիտական ծառայություններ) հոդվածից պակասեցնել 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

26 մայիսի 2011 թվական

ք. Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 28

26 մայիսի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29 և 33 հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2011 թվականի բյուջեի եկամուտները՝ «Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ» 1392 տողն ավելացնել 3000000 (երեք միլիոն) դրամով:
4. «Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ» 1392 դասակարգման 3000000 (երեք միլիոն) դրամ ուղղել 04.5.1.51 դասակարգման (ճանապարհային տրանսպորտ) 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածին:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

26 մայիսի 2011 թվական

ք. Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 29

26 մայիսի 2011 թվական

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 5 կետի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի սոցիալապես անապահով ներքոհիշյալ բնակիչներին տրամադրել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

26 մայիսի 2011 թվական

ք. Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26 -Ի ԹԻՎ 29 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

N	Ազգանուն,անուն	Գումարի չափ
1.	Մուրադյան Վարդան	10000 (տաս հազար) դրամ
2.	Գալստյան Հոռոմսիմ	10000 (տաս հազար) դրամ
3.	Կարապետյան Էդուարդ	20000 (քսան հազար) դրամ
4.	Հովհաննիսյան Ձվարթ	10000 (տաս հազար) դրամ

	Ընդամենը	50000 (հիսուն հազար) դրամ